9421

332.2
Z-11

1932

41215-աե

332.2
Հ-11

Հաստատված է՝

ՖԺԿ ՀԱՆԵՍՈՂԼՅԱՆ

Պետբանկի կառավարիչ՝ ԴԱՎԹՅԱՆ

Պետաշխ. խնայ. Դրամ. և

Պետվարկի Վարչության Պետ՝ ՔԵԹԻԿՅԱՆ.

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Գյուղբյուջեները Պետաշխ. խնայդրամարկղների միջոցով կատարելու մասին. 1-ին — Գյուղական բյուջեների լրիվ կատարումն այն գյուղերի նկատմամբ, որտեղ Հայաստանի խնայդրամարկղների և Պետվարկի վարչությունը հնարավոր կգտնի, տարվելու է համաձայն այս ժամանակավոր կանոնադրության.

Ծանոթություն. — Պայմաններից և հնարավորություններից ելնելով վարչությունը սահմանում է հերթականություն այն հաշվով, որ մինչև 1933 թ. հունվարի 1-ը, գյուղբյուջեների քանակի 50%-ից ոչ պակասի լրիվ կատարումը հանձնվի խնայդրամարկղներին։

2-րդ. — Գյուղբյուջեների լրիվ կատարող խնայդրամարկղների վրա դրվում է հետևյալ պարտականությունները:

Պետական Հրապարակային Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

Ք2001

23827-60

2010

1. Տեղական բոլոր յեկամուտների ընդունելությունը (թե անհատ հարկատուներից անմիջականորեն և թե գյուղխորհուրդների միջով գանձված)։

2. Ընդունված յեկամուտների ըստ բյուջեների և ընթացիկ հաշիվների բաշխումը և ձևակերպումը։

3. Ընթացիկ հաշիվներից ծախքերի կատարումը.

4. Պետական հարկերից և տուրքերից տեղական բյուջեյին հասանելի մասհանումների կատարումը։

5. Նպատակային և այլ յեկամուտների ընդունելությունը հատուկ ընթացիկ հաշիվներով։

3-րդ.— Տեղական բյուջեների կատարման համար խնայ-դրամարկղներն իրենց մոտ բացում են անտոկոսաբեր ընթացիկ հաշիվներ.

1. Հաշիվ գյուղբյուջեյին պատկանող յեկամուտների.

2. Ինքնահարկման գումարի և

3. Գյուղխորհուրդների տրամադրության տակ գտնվող նպատակային և զանազան գումարների։

4-րդ—Յեկամուտների ըստ հաշիվների և բյուջեների զանազանելու համար, շրջֆինբաժինն ուղարկում է խնայդրամարկղներին յեկամուտների տախտակ, ցույց տալով, թե վոր յեկամուտը վոր բյուջեյին է պատկանում, կամ վոր ընթացիկ հաշվին պետք է գրանցվի։ Վոր պետական և տեղական հարկերից և տուրքերից վորքան տոկոս է մասհանվում գյուղի և շրջանի և բյուջեյի օգտին։

5-րդ. Բյուջեների կատարման մանրամասն (դետալիզովաննիյ) հաշվառումը և հաշվետվությունը տանում է գյուղխորհուրդը, համաձայն ինքնուրույն բյուջ



332.2
3-11
1008
34385

ունեցող գյուղխորհուրդների հաշվետվության և հաշվետարության հրահանգի։

## 2. ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6-րդ. Տեղական բյուջեների բոլոր տեսակի յեկամուտներն ընդունվում են հարկատուների կամ մուծողի վճարահատուցման փաստաթղթի հիման վրա, այն է՝ հարկային թերթի կամ առանձին հայտարարության, յեթե հարկային թերթ չկա։ Այդ փաստաթղթերը պետք է կազմված լինեն այն բոլոր մանրամասնություններով, վորոնք անհրաժեշտ են խնայ-դրամարկղներին մուծումներն ըստ բյուջեների և ընթացիկ հաշիվների դասավորելու համար։

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ հարկատու ներկայացրած փաստաթուղթը դրամարկղում չի մնում ինչպես, օրինակ՝ հարկաթերթերը, խնայ-դրամարկղն այդպիսի մուծումների համար կազմում է ցուցակ (ռեեստր) անհրաժեշտ մանրամասնություններով։ Ռեեստրը կազմվում է պատճենահան թղթի միջոցով 2 օրինակից։

7-րդ. Օրվա գործառնությունը վերջանալուց հետո, կամ վոչ ուշ հետևյալ օրից խնայդրամարկղները տեղական բյուջեներին պատկանող մուտքի բոլոր փաստաթղթերը համապատասխան ցուցակով հանձնում են գյուղխորհրդին։

Այն յեկամուտների նկատմամբ, վորոնց փաստաթղթերը չեն թողնված խնայդրամարկղում, ուղարկվում են նախորդ հոդվածով նախատեսված ռեեստրի մեկ օրինակը։

Ծանոթություն. — 1) Անգրագետ հարկատուների մուծման հայտարարությունները կազմում է խնայդրամարկղի աշխատակիցը։

2) Անհատ հարկատուների կողմից մուծվող հարկերը, ինչպես արհեստագործական, եկամտային, գերաշահ և այլն, ժամկետից հետո մուծելու հետևանքով գանձվելիք՝ տույժը (պենիան) հաշվում է գյուղխորհուրդը։ Դրա համար հարկատուն նախ ներկայանում է գյուղխորհրդին, որը և հաշվում է տույժի գումարը և նշանակում փաստաթղթի վրա։

3) Անհատ հարկատուների անձնական հաշիվները վարում են գյուղխորհուրդները։

8-րդ. Երբ գանձված գումարը լրիվ չափով չի ծածկում հարկատուից ավյալ հարկը, ապառքը և տույժը, այդ դեպքում մուծված գումարից նախ ընդունվում է ապառքն, ապա տույժը և մնացած գումարն ընդունվում է ի հաշիվ ընթացիկ տարվա հարկի։ Այս պայմանը պահպանվում է յուրաքանչյուր հարկի կամ տուրքի նկատմամբ առանձին-առանձին։

Չի թույլատրվում, ենթադրենք, գանձված պետապի գումարն ընդունել գյուղհարկի դիմաց, կամ ինքնահարկը Պետապի դիմաց և այլն։

## ԳՅՈՒՂՄԻԱՍՀԱՐԿԻ ԵՎ ՊԵՏԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

9-րդ. — Խնայդրամարկղի կողմից գյուղմիասհարկը և Պետապի գումարներն ընդունվում են համաձայն ներկայացրած հարկաթերթի, իսկ գյուղխորհուրդների կողմից գանձված գումարները՝ համաձայն գյուղխորհրդի ցուցակի։



Ծանոթություն. — 1) Առանձին հարկատուների անձնական հաշիվները վարում է գյուղխորհուրդը։

10-րդ. — Մուծված գումարների համար, հարկաթերթերի վերջին կտրոնի համապատասխան սյունյակում նշանակվում է ընդունված գումարը, հաստատելով այդ խնայդրամարկղի վերահսկիչի, գանձապահի ստորագրությամբ և կնիքով, իսկ երբ գումարներն ընդունված են գյուղխորհրդի ցուցակներով, այդ նշանակումներն արվում են ցուցակի իսկ վրա, որը մյուս փաստաթղթերի հետ միասին վերադարձվում է գյուղխորհրդին։

11-րդ. — Գումարներն ընդունելու ժամանակ, խնայդրամարկղի վերահսկիչը վճարողի մոտ եղած փաստաթղթի հիման վրա, պարզում է վճարման ենթակա գումարը և մուծված գումարով մարում է նախ հին պարտքը (եթե կա), նրա վրա եղած տույժը և ապա ընթացիկ տարվա դրույքը-ըստ ժամկետների (տես հատ. 8-րդ)։ Տույժը հաշվելիս գյուղխորհուրդը ղեկավարվում է հետևյալով։ Աշխատավորական անհատական տնտեսություններից տույժը գանձվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,2 %, այսինքը ամսական յուրաքանչյուր ռուբլուց 6 կոպեկ։

Կոլտնտեսություններից տույժը գանձվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,1 %, այսինքը ամսական մի ռուբլուց 3 կոպեկ։

Կուլակային տնտեսություններից և այն անձնավորություններից, որոնք հարկվում են եկամտային հարկի 3-րդ ցուցակով, տույժը գանձվում է 0,4 %-ի չափով, այսինքն ամսական մի ռուբլուց 12 կոպեկ։

12-րդ — Վերահսկիչը, վճարողներից ստացած

գումարները գրանցում է հատուկ ցուցակում, անհրաժեշտ տվյալներով, ապա հարկաթերթի կամ ծանուցագրի վրա նշումներ անելուց հետո, հանձնում է գանձապահին դրամն ստանալու համար։ Դրամն ստանալուց հետո գանձապահն ստորագրում է վերահսկիչի կողմից կատարված հաշվարքի տակը, փաստաթուղթը վերադարձնում է վճարողին։

Ծանոթություն. — Ցուցակի բլանկները խնայդրամարկղներն ստանում են գյուղխորհրդից.

Ցուցակները կարելի յե կազմել պատճենահան թղթի միջոցով 2 օրինակից, վորոնցից առաջինը մնում է խնայդրամարկղում, իսկ յերկրորդը՝ գյուղբյուջեյի մյուս փաստաթղթերի հետ, ուղարկվում է գյուղխորհուրդին (տես հոդ. 10).

13-րդ. — Վերահսկիչն, օրվա վերջում հաշվում է այդ օրվա ընթացքում ըստ ցուցակի գանձված գումարները, առանձին գյուղհարկ և առանձին պետական գումարները և համեմատում է գանձապահի տվյալների հետ։

Գանձապահին թույլատրվում է իր մոտ ձեվս ունենալ ընդունված գումարների տեղեկագիր, վորի մեջ գրանցում է փաստաթղթի №№ և գումարը։

14-րդ. — Այդ ցուցակների հիման վրա խնայդրամարկղի վերահսկիչը կատարում է գյուղհարկի մուծված գումարների հաշվարկը, այսինքն համաձայն սահմանված տոկոսների այդ գումարը բաժանում է գյուղբյուջեյի և շրջբյուջեյի միջև և կազմում է 2 օրինակից դրամարկղային ձև № 3 մուտք օրդեր, գյուղբյուջեյին պատկանող գումարների համար առանձին և վերադաս բյուջեյին առանձին, վերջինս գրանցվում է



գործառության օրագրի 5-րդ սյունյակում (գանազան)։

15-րդ. — Դրամարկղային մուտք օրդերներն ամենօրյա հաշվետվության հետ միասին ուղարկվում են շրջխնայ-դրամարկղին։

Այն խնայդրամարկղները, վորոնք հաշվետվությունները ներկայացնում են ձև № 25 տեղեկագրով, գյուղբյուջեյի ընթացիկ հաշվին գրանցվող գումարը ցույց են տալիս տեղեկագրի առաջին բաժնի 22-րդ սյունյակում. իսկ շրջբյուջեյի գումարները նույն բաժնի 16-րդ սյունյակում։

16. — Յեթե վճարումը կատարվում է վճարողի ավանդներից փոխանցելու միջոցով, վճարողի անձնական հաշվից պահանջվող գումարը դուրս գրելուց հետո, այդ գումարը գրանցվում է գործառության օրագրում հաշվային շրջանառության համար գործածվող բլանկի համապատասխան սյունյակներում։

Օրդերները կազմվում են 2 օրինակից ձև № 3-ը, վորից մեկը հաշվետվության հետ ուղարկվում է շրջխնայդրամարկղին։

17. — Նույն օրվա վերջին, կամ վոչ ուշ, քան հաջորդ օրվա սկզբից, խնայդրամարկղը ընդունված գումարների ցուցակն ուղարկում է գյուղխորհրդին (տես հոդ. 10-րդ), վորի վրա նշանակված պետք է լինի, թե վորքան է մուծված գյուղբյուջեյի և վորքան շրջանի հաշվին։

Այդ ցուցակների հիման վրա գյուղխորհուրդը գրանցում է հարկատուների անձնական հաշիվները և նրանց կողմից մուծված գումարները։

18-րդ. — Սխալ կամ ավել գանձված գումարները, վորոնք հարկատուի միջնորդության համաձայն պետք

է վերադարձնել, կատարվում է գյուղխորհրդի վորոշման հիման վրա։ Վերադարձման յենթակա գումարները դուրս են գրվում նույն որվա մուտքի յեղած գումարներից։ Այն դեպքերում, յերբ վերադարձնելու որը գյուղ-հարկի, կամ ապահովագրական գումարների մուտք չի յեղել, վերադարձման յենթակա գումարի այն մասը, վորն ընկնում է գյուղբյուջեյի վրա, դուրս է գրվում նրա ընթացիկ հաշվից, իսկ մյուս մասը, վորը յենթակա յե վերադարձման շրջբյուջեյի հաշվից, վերադարձվում է ի հաշիվ շրջանի գումարների, կանխիկ դրամով՝ այսինքն յերբ վերադարձը կատարվում է որվա մուծված գումարներից և վոչ թե ընթացիկ հաշվից, ձև № 25 տեղեկագրի մեջ գրանցվում է 2 բաժնի 22-րդ սյունյակում, իսկ մյուս մասը, վորը վերաբերվում է շրջանային բյուջեյին, գրանցվում է նույն տեղեկագրի 2 բաժնի ազատ սյունյակում վերնագրելով այդ սյունյակը «վերադարձված հարկեր և տուրքեր»։

19-րդ. — Այն դեպքում, յերբ վերադարձման յենթակա գումարն ավել է որվա մուտք յեղած ընդհանուր գումարից, վերադարձված գումարը գործառնության որագրի մեջ գրանցվում է ընդհանուր գումարով, առանձին այն մասը, վորը վերադարձվում է գյուղբյուջեյից և առանձին՝ այն գումարը, վորը վերադարձվում է շրջանային բյուջեյից կամ Պետապի գումարներից։

Բոլոր մնացած դեպքերում, այնքան, վորքան վերադարձումը բաշխվում է շրջանի և գյուղի բյուջեների միջև նույն չափով, ինչ չափով և մուծումները, գործառնության որագրում գրվում է միայն տարբերությունը, այսինքն մնացած մաքուր գումարը։

Ծանոթություն. — Վերադարձված գումարն ստանալու համար ստացողն ստորագրություն է տա-



լիս խնայ-դրամարկղին, գյուղխորհրդի վորոշման արձանագրության քաղվածքի վրա։

20 րդ. — Վորովհետև գյուղ միասհարկը, կուլտ շինարարական տուրքը և փոխառություններից տեղական բյուջեներին մասհանվող գումարները նախ Պետբանկի հաշիվներով 100 տոկոսով ձևակերպվում են վորպես հանրապետական պետբյուջեյի յեկամուտներ և ապա նույնպես 100% մասհանվում համապատասխան տեղական բյուջեների ոգտին, յուրաքանչյուրին սահմանված տոկոսային հարաբերությամբ, դրա համար շրջխնայդրամարկղները պարտավոր են՝

1) Գյուղխնայդրամարկղներից ստացած փաստաթղթերից նույն որը ջոկել պետական բյուջեյին պատկանող (գյուղ հարկ, կուլտ-շինարարական տուրք) և մասհանման միջոցով տեղական բյուջեներին անցնող գումարները, ինչպես նաև Պետապի մուծումների փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմել 2 որինակից մի ամփոփ տեղեկագիր, վորից մեկն ուղարկվում է Պետբանկի բաժանմունքին։ (Տեղեկագրի № 2 ձևը կցվում է)։

Այս հաշվարկումն ստորագրելուց հետո, այն գումարները, վորոնք պետք է փոխանցվեն Պետբանկի բաժանմունքին, խնայդրամարկղը ձևակերպում է Պետբանկի հետ շրջանառության գումարների հաշվի գրքում և հաշվետվության մեջ։

Պետբանկին փոխադրվելիք գումարները գրանցվում է Պետբանկի հաշվի կրեդիտում, իսկ վերադարձված գումարները, նույն հաշվի դեբետում։

21-րդ. — Այս տեղեկագրի հիման վրա Պետբանկի բաժանմունքը տեղեկագրում ցույց տված գումար-

ները ձևակերպում է հանրապետական պետբյուջեյի հաշիվներով № 10 ա (պետշեկամուտներ) և № 10 ա (մասհանում) հաշիվների դեբետում և կրեդիտում 100%-ով և շրջբյուջեյին պատկանող մասհանման գումարը ձևակերպում նրա ընթացիկ հաշվում։

## ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ինքնահարկման գումարներն ընդունվում են վճարողի մոտ յեղած ծանուցագրի կամ գյուղխորհրդի կողմից խնայդրամարկղին ուղարկած ցուցակի հիման վրա։

Ծանոթություն. — *Իրեն չենթակա գյուղերից գանձում կատարելու ժամկետների մասին, գյուղխորհուրդը նախորոք տեղյակ է պահում խնայդրամարկղներին։*

22-րդ. — Ինքնահարկման գումարներն ընդունելիս խնայդրամարկղի վերահսկիչը յուրաքանչյուր մուծվելիք գումար գրանցում է տեղեկագրի մեջ և այն դեպքերում, յերբ գումարը մուծվում է վճարողի ձեռքում ունեցած փաստաթղթով, նրա վրա նշանակումներ է անում վճարվելիք գումարի և բարդած տուժի մասին, ստորագրում է և հանձնում գանձապահին։

Վերջինս ընդունելով գումարն ստորագրում է վերոհիշյալ փաստաթուղթը և հանձնում է վճարողին։

Յեթե վճարումն ընդունվում է գյուղխորհրդի ցուցակով, խնայդրամարկղի վերահսկիչն ըստ խնայդրամարկղում յեղած ընդհանուր ցուցակի, պարզելով վճարողից հասանելիք գումարը, նշում է ցուցակի մեջ



ստանալու մասին, ապա գրանցում է տեղեկագրի մեջ պատրաստում է ձև № 31 անդորրագիրը, ստորագրում է և հանձնում է գանձապահին։ Վերջինս ստանում է անդորրագրում նշած գումարը, ստորագրում է և հանձնում է վճարողին։

Գանձված տույժն անդորրագրի մեջ ցույց է տըրվում առանձին։

Ծանոթություն. — *Այն դեպքերում, յերբ, վճարողի ձեռքին փաստաթուղթ չկա և գյուղխորհրդի ցուցակում վճարողի անունը չի գտնվում, խնայդրամարկղը գումարն ընդունում է մուծողի ցուցմունքների հիման վրա և տալիս է նրան № 31 անդորրագիրը։*

23. — Գյուղխորհրդի կողմից խնայդրամարկղին ուղարկվելիք ցուցակը պետք է կազմված լինի ըստ գյուղերի հետևյալ սյունյակներով։

1) №№ ըստ կարգի, 2) վճարողի անունը, հայրանունը և ազգանունը. 3) անցյալ տարվա ապառիկ գումարը, 4) ընթացիկ տարվա ինքնահարկման գումարը, 5) ժամկետանց համար հաշված տույժը, 6) ընդամենը, 7) յերբ է մուծված և 8) մուծված գումարի չափը։

Յոթերորդ և ութերորդ սյունյակները լրացնում է խնայդրամարկղը — գումարն ստանալու ժամանակ։

24-րդ. — Որվա վերջում վերահսկիչն ըստ տեղեկագրի դուրս է բերում ընդունված վճարումների ընդհանուր գումարը և համեմատում է գանձապահի տըվյալների հետ։ Գանձված ընդհանուր գումարի համար կազմում է դրամարկղային մուտք որդեր։ Գործառնության որագրով գումարը ձևակերպվում է ինքնահարկ

ման ընթացիկ հաշվի անձնական քարտի մեջ։ Օրդերի հակառակ երեսում նշում է ավանդի մնացորդը՝ հաստատելով այն իր ստորագրությամբ։

Ծանոթություն.— Գանձապահին թույլատրվում է օրվա ընթացքում մուտք եղած գումարները հաշվի առնել առանձին ցուցակում, նշելով փաստ. №№ և գումարը։

25-րդ. — Մուտքի օրդերն օրվա փաստաթղթերի հետ միասին գյուղխնայդրամարկղն ուղարկում է շրջխնայդրամարկղին, իսկ ընդունված ինքնահարկման գումարների տեղեկագիրը, վերահսկիչի և գանձապահի ստորագրությամբ ուղարկում է գյուղխորհրդին։

Ըստ այդ տեղեկագրի գյուղխորհուրդը հաշվի է առնում յուրաքանչյուր վճարողի կողմից մուծված գումարը և իր ընթացիկ հաշվի գրությունը։

26-րդ. — Եթե վճարումը ձևակերպվում է վճարողի ընթացիկ հաշվից փոխանցում կատարելու միջոցով, գումարը վճարողի անձնական հաշվից դուրս գալուց հետո 10, 11, 12-րդ հոդ. հոդ. նախատեսված ձևականությունները պահպանելով, օրվա վերջը գրվում է հաշվային գործառնությունների համար սահմանված օրագրի համապատասխան սյունյակներում։

Ծանոթություն. — 1) Այն դեպքում, երբ խնայդրամարկղն իր հաշվետվությունը ներկայացնում է ձև № 25-ով, այդ փոխանցումները ցույց են տրվում 3-րդ բաժնի 1-ին և 19-րդ սյունյակներում։

2) Գանձապահի տվյալների հետ կանխիկ մուծված ընդհանուր գումարը համեմատելու նպատակով տեղեկագրում պետք է նշանակել այն բոլոր



գումարների մասին, վորոնք փոխանցվել են հաշվային շրջանառությամբ։

## ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

27-րդ. — Գյուղխորհուրդն իր ընթացիկ հաշվից ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարն ըստանում է ընթացիկ հաշվի չեկերով։ Չեկերի գրքույկը գյուղխորհուրդը ձեռք է բերում խնայդրամարկղից։

28-րդ. — Չեկերը կարող են գրվել անվանական և ըստ ներկայացնողի։ Կանխիկ դրամի փոխարեն դրամ ստացողին ընթացիկ հաշվի չեկ տալու դեպքերում գյուղխորհուրդը հիմք ծառայող ծախսային փաստաթղթի վրա ստացողից ստորագրություն է վերցնում — այսինչ № չեկը ստանալու մասին։

29-րդ. — Չեկերի վրա վոչ մի ջնջումներ և ուղղումներ չի թույլատրվում։ Սխալ գրված չեկերը մնում են գրքույկի մեջ և խաչաձև-ջնջվում, իսկ նրա փոխարեն գրվում է հետևյալ նոր չեկը։

30 րդ. — Գյուղխորհուրդը նախօրոք հայտնում է խնայդրամարկղին, թե իր ընթացիկ հաշվի չեկերը ով է ստորագրելու և ուղարկում է այդ անձնավորությունների ստորագրության նմուշները։

Բոլոր գրված չեկերի վրա տրվում է գյուղխորհրդի կնիքը։

Կասկած առաջ բերող չեկերով խնայդրամարկղը գումար բաց չի թողնում և կապվելով գյուղխորհրդի հետ, պարզում է նրա իսկական լինելը։ Կեղծված չեկերով բաց թողած գումարի պատասխանատվությունն ընկնում է խնայդրամարկղի վրա։

31. րդ. — Գյուղխորհրդի ընթացիկ հաշվից ծախքերը կատարվում են այդ հաշվում փաստորեն գտնված գումարի սահմանում։

Ընթացիկ հաշիվներում վոչ մի գերածախս կամ ի հաշիվ հետագա մուծումների վճարումներ կատարել չի թույլատրվում։

32-րդ. — Խնայգրամարկղները պարտավոր են. ապահովել գյուղխորհուրդների դրամական պահանջները, մանավանդ աշխատավարձ վճարելու օրերին (ընթացիկ հաշվի գումարի սահմանում)։

Խոշոր գումարների պահանջ զգալու դեպքերում, գյուղխորհուրդը նախորոք զգուշացնում է դրամարկղին։

33-րդ. — Շրջֆինբաժինները մշտական հսկողություն պետք է ունենան գյուղբյուջեների կատարման կանոնավորությունների և հրահանգների ճիշտ կիրառման վրա։

Շրջֆինբաժիններն իրավունք ունեն ուսումնասիրություններ և ստուգումներ կատարելու խնայգրամարկղներում և գյուղխորհրդում բյուջեների կատարման աշխատանքի բնագավառում։

34. րդ. — Գյուղբյուջեյին չպատկանող գումարները, գյուղխորհրդի կողմից ծախսելու, կամ իր ընթացիկ հաշիվը մուծելու, նաև հաշվետվությունները ժամանակին չներկայացնելու համար, Շրջգործկոմն իրավասու չէ կարգադրել խնայգրամարկղին գյուղբյուջեյի ընթացիկ հաշվից դրամ բաց չթողնել մինչև սխալ ծախսած գումարների վերադարձնելը կամ հաշվետվության ներկայացնելը։



Ծանոթություն. — Գյուղբյուջեյին չպատկանող յեկամուտները գյուղի կարիքների համար ծախսելու պատասխանատվությունն ընկնում է անհատապես գյուղխորհրդի նախագահի վրա, իսկ հաշվետվությունը ժամանակին չներկայացնելու պատասխանատվությունն ընկնում է ֆին. աշխատակցի կամ քարտուղարի վրա, վորտեղ ֆինաշխատակից չկա։

Զեղծարարություններից խուսափելու համար չեկերի գրքույկները պահվում են գյուղխորհրդի նախագահի փակ արկղում, ապահով տեղում։

Գործառնություններ կատարելու ժամանակ գրքույկը հանձնվում է ֆինաշխատակցին, վորն օրվա գործողությունները վերջացնելուց հետո, գրքույկը մնացած չեկերի հետ վերադարձնում է գյուղխորհրդին։

Գյուղխորհրդի նախագահը հսկողություն պետք է ունենա ծախսված և մնացած չեկերի վրա, ընդունելիս և հանձնելիս ստուգի չեկերի բլանկների ծախսումը

Ֆինպլանի յեվ բյուջեյի կատարման սեկտորի
ղեկավար՝ (ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ)
Ավ. տեսուչ՝ (ԱԶԱՐՅԱՆ)

. . . . . . . . ՊԵՏԲԱՆԿԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ.

ՊԱՏՃԵՆ ՇՐՋԳԻՆԲԱԺՆԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

. . . . . . . ՇՐՋԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ

Մուծված է գյուղբյուջեյի ընթացիկ հաշիվներում և փոխանցված է Պետբանկ հետևյալ գումարները՝

Գանձված է . . . . մինչև . . . . 1932 թ.

| Գյուղխորհրդի անունը | №№ | ՑԵԿԱՄՈՒՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Ընդամենը մուծված է | ՎՈՐԻՑ | | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գյուղխորհրդի պ. ֆ. պահեստ | Շրջանային պ. ֆ. պահեստ | Թեկնածու ֆոնդին | Փոխառության | Այլ կազմակերպությունների հատկացված | |
| | 1. | Գյուղհարկ. Վորից-կոլտնտեսություններից կոլտնտես. աշխ. տնտ. | | | | | | | |
| | 2. | Պետտուրք . . . Վորից—1. 2. 3. | | | | | | | |
| | 3. | Փոխառության հատուցումից Վորից 1. գյուղսեկտ. 2. բանվ. ծառ. | | | | | | | |
| | 4. | Կուլտ. հարկ | | | | | | | |

ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ՝



23824-60
1008
34385

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է

Ֆինժողկոմ ՀԱՆԵՍՈՂԼՅԱՆ

Պետբանկի կառավարիչ՝ ԴԱՎԹՅԱՆ

Պոս. աշխ. խնայդրամարկղների յեվ Պետվարկի վարչ. պետ՝ ԲԵԹԻԿՅԱՆ

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2.

Պետ. աշխ-խնայդրամարկղների միջոցով գյուղական բյուջեների միջոցների պահպանման և ծախսերի կատարման կարգի մասին։

1. Տեղական բյուջեներին պատկանող յեկամուտների պահպանումը և ծախսերի կատարումը դրվում են խնայդրամարկղների վրա։

Ծանոթություն. — 1. Շրջանային կենտրոնի գյուղբյուջեյի կատարումը № 1 ժամանակավոր կանոնադրության կարգով դրվում է շրջանային խնայդրամարկղի վրա։

2. № 1 և 2 կանոնադրություններով ղեկավարվող խնայդրամարկղների ցանկը վորոշում է խնայդրամարկղների վարչությունը։

Гос. Пуб. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна

2. Խնայողական դրամարկղներից 8 — 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղխորհուրդներին թույլատրվում է գյուղբյուջեներին պատկանող գումարներից պահել գյուղխորհրդում պահով արկղի մեջ, բայց ոչ ավել, քան առաջիկա մի քանի օրվա սպասվելիք ծախքերի գումարից։

Ծանոթություն. — 1. Այն գյուղերում, որտեղ կա խնայդրամարկղ կամ հետագայում կբացվի այդպիսին, գյուղխորհուրդն իրավունք չունի իր դրամարկղն ունենալ։

2. Սեփական դրամարկղ ունեցող գյուղխորհուրդների ցուցակը կազմում է Շրջգործկոմը, ելնելով տեղական պայմաններից։

3. Շրջ. ֆին-բաժինը, շրջխնայդրամարկղի և գյուղխորհրդի համաձայնությամբ, որոշում է դրամարկղ ունեցող գյուղխորհուրդների այն գումարի չափը (լիմիտը), որից ավելին գյուղխորհուրդն իրավունք չունի պահելու իր դրամարկղում։

4. Գյուղխորհրդի գումարներն ընդունելու համար խնայդրամարկղները բաց են անում իրենց մոտ հետևյալ անտոկոսաբեր ընթացիկ հաշիվները՝

ա) Հաշիվ գյուղ-բյուջեյին պատկանող յեկամուտների.

բ) » ինքնահարկման գումարների.

գ) » գյուղխորհրդի տրամադրության տակ գտնվող նպատակային և զանազան գումարների։

Ծանոթություն. — Ըստ համապատասխան ընթացիկ հաշիվների գումարները ճիշտ մուծելու պատասխանատվությունն ընկնում է գյուղխորհրդի վրա։



5. Գյուղբյուջեյի ընթացիկ հաշվին խնայդրամարկղներն ընդունում են միայն տվյալ գյուղբյուջեյին պատկանող յեկամուտները և շրջանից ստացած դոտացիան։

Ծանոթություն. — Գյուղական և վերադաս բյուջեներին պատկանող յեկամուտների անվանացուցակը, պետական յեկամուտներից տեղի բյուջեյին տրվող մասհանումների տոկոսի չափը, գյուղխորհուրդները և խնայդրամարկղներն ստանում են շրջ. ֆին բաժնից։

6. Ինքնահարկման գումարներն ընդունվում են այդ անունով բացված ընթացիկ հաշվին և գտնվում են գյուղխորհրդի տրամադրության տակ։

7. Նպատակային և զանազան գումարների ընթացիկ հաշվին ընդունվում են այն գումարները, որոնք գտնվում են գյուղխորհրդի տրամադրության տակ, բայց ունեն իրենց հատուկ նպատակը, որի վրա պիտի ծախսվեն և այնպիսի գումարներ, որոնք մուծված են ժամանակավորապես, յենթակա յեն վերադարձման և գյուղբյուջեյի հետ ոչ մի կապ չունեն։

8. Գյուղբյուջեյին չպատկանող յեկամուտները, ինչպես օրինակ՝ շրջանային բյուջեյին հասանելի գյուղմիասհարկը, Պետապի գումարները, փոխառությունների իրացումից ստացված գումարները. գյուղխորհուրդն ամեն օր հանձնում է խնայդրամարկղին։ Խնայդրամարկղն այդ գումարները փոխադրում է շրջխնայդրամարկղին, որը փոխանցում է շրջանային պետբանկի բաժանմունքի հաշիվներով. վերջինս այդ գումարները ձևակերպում է համապատասխան բյուջեներով և ընթացիկ հաշիվներով։

9. Գյուղբյուջեներին չպատկանող գումարները խնայդրամարկղին հանձնելիս, գյուղխորհուրդը կազմում ե ուղեկցող մի գրություն № 2, յերկու օրինակից և գումարների հետ ներկայացնում ե խնայդրամարկղին։

Խնայդրամարկղը մի օրինակի վրա վավերացնում ե գումարներն ստանալը, ստորագրում ե, կնքում և այդ օրինակը վերադարձնում ե գյուղխորհրդին, իսկ յերկրորդ օրինակը ձև № 3 օրդերի հետ միասին ուղարկում ե շրջխնայդրամարկղին։

10. Այն գյուղխորհուրդները, վորոնք խնայդրամարկղից հեռու գտնվելու պատճառով ունեն իրենց դրամարկղը, պարտավոր են իրենց չպատկանող գումարները 2—3 օրը մեկ անգամ, ամբողջությամբ, կանխիկ դրամով մուծել շրջանային Պետ բանկի բաժանմունքը համապատասխան բյուջեներով և ընթացիկ հաշիվներով ձևակերպելու համար։

11. Պետբանկը գյուղխորհրդի մուծած, ինչպես նաև շրջխնայդրամարկղի միջոցով ձևակերպված (տես § 9) գումարները, ընդունում ե և ձևակերպում համապատասխան բյուջեներով ու ընթացիկ հաշիվներով, ըստ վորում այն գումարները, վորոնք նախ գրանցվում են հանրապետական պետբյուջեյով և ապա մասհանվում տեղական բյուջեներին, (ինչպես օրինակ գյուղմիասհարկը, կուլտ-շինարարական տուրքը, փոխառության գումարներից կատարվելիք մասհանումները), Պետբանկը ձևակերպում ե պետբյուջեյով գանձված գումարը 100%-ով, չնայած գյուղբյուջեյին հասանելի գումարները կանխիկ դրամով չեն մուծվել բանկի դրամարկղը և անմիջականորեն անցել են գյուղբյուջեյի ընթացիկ հաշվին խնայդրամարկղներում։



Դրա համար, 10-րդ կետում հիշված գյուղխորհուրդները վերադաս բյուջեներին պատկանող գումարները բանկ մուծելու հետ միասին, ներկայացնում են կցված նաև № 3 ձևով տեղեկագիր, վորպեսզի բանկը հնարավորություն ունենա պետբյուջեյին պատկանող յեկամուտները 100%-ով ձևակերպի իր հաշիվներով և շրջբյուջեյի հասանելիք գումարը մասհանի։

12. Վերադաս բյուջեներին պատկանող այն գումարները, վորոնք փոխանցվում են պետբանկը շրջխնայդրամարկղների միջոցով, ձևակերպվում են № 1 կանոնադրության 20 և 21 րդ §§-ով նախատեսված կարգով։

13. Գյուղխորհրդին չպատկանող գումարները ծախսելու, կամ իր ընթացիկ հաշվին մուծելու դեպքում, գյուղխորհրդի նախագահը պատասխանատվության կենթարկվի և ծախսված գումարը Շրջգործկոմի կամ Շրջֆինբաժնի կարգադրությամբ կպահվի գյուղբյուջեյի յեկամուտներից, կամ նրանց հասանելի դոտացիայից։

Ծանոթություն. — Բացի այս հոդվածով նախատեսված դեպքերից, Շրջգործկոմներն իրավասու չեն առանց գյուղխորհրդի համաձայնության գյուղբյուջեյի ընթացիկ հաշվից գումարներ դուրս գրել։

14 Այն գյուղերում, վորտեղ խնայդրամարկղի վրա դրված ե միայն գումարների պահպանման պարտականությունները այս կանոնադրության համաձայն, առանձին հարկատուներից գումարներն ընդունում են գյուղխորհուրդները և որվա վերջին մինչև խնայդրա-

մարկղի աշխատանքի ավարտումը, ընդհանուր գումարով ըստ տեսակների մուծում են խնայդրամարկղը, որի համար կազմում են ձև № 1 ուղեկցող գրությունը։

15. Սխալ, կամ ավելի գանձված գումարները, որոնք յենթակա յեն վերադարձման, կատարվում են գյուղխորհուրդների որոշումների հիման վրա։ Այդ գումարները վերադարձվում են արդեն մուծված գումարներից, իսկ յեթե այդ օրը մուծումներ չեն յեղել, կամ գյուղխորհրդի դրամարկղում բավականաչափ գումար չկա, վերադարձումը կատարվում է գյուղխորհրդի ընթացիկ հաշվից։

Վերադարձման յենթակա գումարի այն մասը, որն ընկնում է շրջբյուջեի Պետապի գումարների վրա, յեթե վերադարձման օրն այդ հաշիվներին հասանելի մուծումներ չեն յեղել, գյուղխորհուրդը գումարը վերադարձնում է իր միջոցներից և հետագայում հետ է ստանում շրջբյուջեի կամ Պետապի գումարներից։ Յեթե վերադարձվելիք գումարը խոշոր է և կարող է ազդել գյուղխորհրդի բյուջեի կատարման վրա գումարը վերադարձնելուց հետո գյուղխորհուրդը դիմում է շրջգործկոմին, որը պարտավորվում է անմիջապես հատուցել գյուղբյուջեին թե իր բյուջեից և թե պետապի ընթացիկ հաշվից փոխարինաբար վերադարձված գումարը։

## ԾԱԽՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Գյուղխորհուրդն իր ընթացիկ հաշվից ծախքեր կատարելու համար, անհրաժեշտ գումարը դուրս է գրում ընթացիկ հաշվի չեկերով։ Չեկերի գրքույկը գյուղխորհուրդը ձեռք է բերում խնայդրամարկղից։



17. Չեկերը կարող են գրվել անվանական և ըստ ներկայացնողի։

Կանխիկ դրամի փոխարեն, դրամ ստացողին, ընթացիկ հաշիվ չեկ տալու դեպքերում գյուղխորհուրդը ծախքային փաստաթղթի հիմքի վրա ստորագրություն է վերցնում, թե այս ինչ № չեկը, այս ինչ գումարի, նա ստացել է։

18. Չեկերի վրա վոչ մի ջնջումներ և ուղղումներ չի թույլատրվում անել։ Սխալ գրված չեկերը խաչաձև ջնջվում են և մնում են գրքի մեջ, իսկ նրա փոխարեն գրվում է հետևյալ նոր չեկը։

19. Գյուղխորհուրդը նախորոք հայտնում է խնայդրամարկղին, թե իր ընթացիկ հաշվի չեկերը ով է ստորագրելու և ուղարկում է այդ անձնավորությունների ստորագրության նմուշները։

Գրված բոլոր չեկերի վրա գրվում են գյուղխորհրդի կնիքը։

Կասկած առաջ բերող չեկերով խնայդրամարկղը գումար բաց չի թողնում և կապվելով գյուղխորհրդի հետ, պարզում է նրա իսկական լինելը։

Կեղծված չեկերով բաց թողած գումարների պատասխանատվությունն ընկնում է խնայդրամարկղի վրա։

20. Գյուղխորհրդի ընթացիկ հաշվից ծախքերը կատարվում են այդ հաշվում փաստորեն գտնված գումարի սահմանում։

Ընթացիկ հաշիվներում վոչ մի գերածախս կամ ի հաշիվ հետագա մուծումների վճարումներ չի թույլատրվում։

21. Խնայդրամարկղները պարտավոր են ապահովել գյուղխորհուրդների դրամական պահանջները, մանավանդ աշխատավարձ վճարելու օրերին։ (Ընթացիկ հաշվի գումարի սահմանում։

Խոշոր գումարների պահանջ զգալու դեպքում գյուղխորհուրդը նախորոք զգուշացնում է դրամարկղին։

22. Շրջ-ֆինբաժինները մշտական հսկողություն պետք է ունենան գյուղբյուջեների կատարման կանոնադրությունների և հրահանգների ճիշտ կիրառման վրա։

Շրջ-ֆինբաժինները բյուջեների կատարման գծով իրավունք ունեն ուսումնասիրություններ և ստուգումներ կատարելու խնայդրամարկղում և գյուղխորհրդում։

23. Գյուղբյուջեյին չպատկանող գումարները գյուղխորհրդի կողմից ծախսելու, կամ իր ընթացիկ հաշիվը մուտք անելու դեպքում, նաև հաշվետվությունները ժամանակին չներկայացնելու համար, Շրջգործկոմը իրավասու է կարգադրել խնայդրամարկղին գյուղբյուջեյի ընթացիկ հաշվից դրամ բաց չթողնել, մինչև որ սխալ ծախսած գումարները վերադարձնեն, կամ հաշվետվություն ներկայացնեն։

Ծանոթություն. — Գյուղբյուջեյին չպատկանող յեկամուտները գյուղի կարիքների համար ծախսելու պատասխանատվությունն ընկնում է անհատապես գյուղխորհրդի նախագահի վրա, իսկ հաշվետվությունը ժամանակին չներկայացնելու դեպքում պատասխանատուն հանդիսանում է ֆինաշխատակիցը, կամ քարտուղարը (վորտեղ ֆինաշխատակից չկա)։



24. Չեղծարարություններից խուսափելու համար, չեկերի գրքույկները պահվում են գյուղխորհրդի նախագահի փակ արկղում, ապահով տեղ։

Գործառքները կատարելու ժամանակ գրքույկը հանձնվում է ֆին-աշխատակցին, վորն օրվա գործողությունները վերջացնելուց հետո, գրքույկը վերադարձնում է գյուղխորհրդի նախագահին, մնացած չեկերի հետ միասին։

Գյուղխորհրդի նախագահը հսկողություն պետք է ունենա ծախսված և մնացած չեկերի վրա, ընդունելիս և հանձնելիս ստուգի չեկերի բլանկների ծախսումը։

Ֆինպլանի յեվ բյուջեյի կատարման
սեկտորի ղեկավար՝ (ԽՈՐԴԱՎԵՐԴՅԱՆ)

Ավագ տեսուչ՝ (ԱԶԱՐՅԱՆ)

## Ձև № 1.

. . . . . . . . . . . . . . ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻՆ.

. . . . . . . . . . . . . . ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻՑ.

Ներկայացնելով . . . . . . . . . . . ռուբ. . . . . . կոպ. ( ռ. կ.), խնդրում ենք այդ գումարից ընդունել՝

1) Գյուղխորհրդի ընթացիկ հաշվին ռ. կ.
2) Ինքնահարկման » » ռ. կ.
3) Զանազան գումարների » ռ. կ.

և նշանակել սրա հետ ներկայացված ընթացիկ հաշիվների հաշվեգրքույկի մեջ։

Գյուղխորհրդի նախագահ՝

Կ.Տ. Ֆին աշխատակից՝

Քարտուղար՝

«______» ______________________ 1932 թ.

գյուղ. . . . . . . . .



## Ձև № 2.

. . . . . . . . . . . . . . ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻՆ.

. . . . . . . . . . . . . . ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻՑ.

Ներկայացնելով . . . . . . . . . . . ռուբ. . . . . . . . կոպ. ( ռ. կ.), խնդրում ենք ընդունել և փոխադրել Շրջխնայդրամարկղի միջոցով շրջ. Պետբանկ, մեր կողմից գանձված. վերադաս բյուջեներին պատկանող գումարները։

1) Շրջբյուջեյին հասնող յեկամուտներ ռ. կ.
2) Պետական գումարներ ռ. կ.
3) Փոխառության իրացումից ռ. կ.

և տալ անդորրագիր։

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՖԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ՝

Կ. Տ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

«______» ______________________ 1932 թ.

Գյուղ ______________________

2336

Ձև № 3.

. . . . . . . . . ՊԵՏԲԱՆԿԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ.

ՊԱՏՃԵՆ ՇՐՋԳԻՆԲԱԺՆԻՆ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

. . . . . . . . . . . . ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ

Մուծված է գյուղբյուջեյի ընթացիկ հաշիվներում և փոխանցված է պետբանկ հետևյալ գումարները.

Գանձված է . . . . մինչև . . . . 1932 թ

| Գյուղխորհրդի անունը | №№ | ՑԵԿԱՄՈՒՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Ընդամենը մուծված է | Վ Ո Ր Ի Ց | | | | | Չմուծվածը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կենտրալիզացված և պարտադիր | Չկենտրալիզացված և պարտադիր | [illegible] | Փոխանցումով | [illegible] | |
| | 1. | Գյուղհարկ՝ | | | | | | | |
| | | Վարկեր-կուլակներից | | | | | | | |
| | | կոլտնտես. | | | | | | | |
| | | աշխ. տնտ. | | | | | | | |
| | 2. | Պետապ . . . | | | | | | | |
| | | Վարկեր — 1. | | | | | | | |
| | | 2. | | | | | | | |
| | | 3. | | | | | | | |
| | 3. | Փոխառության | | | | | | | |
| | | երացումից | | | | | | | |
| | | Վարկեր 1. գյուղս... | | | | | | | |
| | | 2. բանկ. | | | | | | | |
| | 4. | Կուլ. ... | | | | | | | |

ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ

... ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

560

Հայպոլիգրաֆի տպարան
Գլավլիտ 6188
Պատվեր 2538
Տիրաժ 3,000

Սրբագրեց Սոս Հակոբյան

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0042860